«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ - ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ

2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄՌԿ և ընդհանուր բաժինը 2022-2023 ուսումնական տարում շարունակել է իր գործունեությունը՝ իր կանոնադրության և «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ներքին կանոնակարգերի համաձայն:

2022-2023 ուսումնական տարում աշխատողների թիվը կազմել է 44 մարդ:

Դասախոսական անձնակազմի թիվը՝ 40 մարդ (որից 33-ը կին):

Գիտությունների թեկնածու - 1

6 դասախոս ներքին համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:

Վարչական անձնակազմը - 8

Ուսումնաօժանդակ կազմը - 5

2022-2023 ուստարվա ընթացքում կնքվել է 12 աշխատանքային պայմանագիր:

Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 7 հիմնական աշխատող, (պայմանագրի լուծմամբ), իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 3-ը:

2022-2023 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է տնօրենի հմապասխան հրաման:

- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N1450-Ն որոշման.
  - դասախոսական կազմ՝ 35 աշխատանքային օր,
  - տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ 25 աշխատանքային օր, ՈԱ պատասխանատու, պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատու, ուսումնաօժանդակ և հաշվապահ 20 աշխատանքային օր:

- Հաստիքացուցակը կազմվել, լսվել է տնօրինական խորհրդի 29.08.2022թ-ի նիստում (արձանագրություն N-1), իսկ հաստատվել է ընդհանուր ժողովի 06.09.2022թ-ի նիստում (արձանագրություն N -07):
- Քոլեջում աշխատում են տարիքային 4 թոշակառուներ:
- Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:
- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:
- Բոլոր հիմնական և ժամավճարային աշխատողների անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:

2022-2023 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 68 -ը:

- Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:
- Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում:
- Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում (ընդհանուր 25 դիմում, 19 զեկուցագիր):
- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում դասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 149 տեղեկանք (աշխատողներին՝ 10, ուսանողներին՝ 84), բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոց. ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:
- Հաշվետու ուստարում «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի էթիկայի խախտման որևէ դեպք չի արձանագրել:

Ի տարբերություն նախորդ տարիների հաշվետու ուստարում բաժնի կողմից իրականացվել է 2019-2020 և 2020-2021 ուստարիների համեմատական վերլուծություն: Վերլուծության արդյունքում ներկայացվել են բարելավման առաջարկություններ:

1. **«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի աշխատակիցների շարժը**



2. **ՄՌԿ և ընդհանուր բաժնի փաստաթղթաշրջանառության շարժը**



3. **«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի դասախոսական կազմի մասնագիտական աճաջընթացը**



ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածի վիճակագրական տվյալների ամփոփման արդյունքում հաջորդ տարվա համար առաջարկվում է իրականացնել միջոցառումների համալիր, մասնավորապեսում.

1. Հնարավորության դեպքում կազմակերպել միջազգային կամ տեղական վերապատրաստումներ դասավանդման մետոդաբանության վերաբերյալ:
2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին ավելացնել մասնագիտական խորհրդատվությունների քանակը:
3. Հանձնարարել ՈԱ պատասխանատուին կազմակերպել սեմինար-խորհրդատվություններ քոլեջի ուսումնական գործընթացի բարելավմանն վերաբերյալ:
4. Շարունակել ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական կարողությունների բարելավման աշխատանքները:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ ***Ա.Գյոզալյան***